Միաբանութիւնն տածած սիրազեղ համարման և յարգանքին գողտրիկ բացատրութեան համար.

Գերապատուելի Աբբա Տէր Մխիթար Ճշմարտասէրացիլ Աժապատուերեան վարդապետի.

Ցնծալով ողջոյն բազմաւ սիրով մատուցանեմ Սրբասնունդ անձին քում, և որք ընդ քև հնազանդեալք բարձօղք խաչին և հետևօղք խաչեցելոյն են, ի Տէր յոյժ խնդալ։ Արդ մէրն քո որ ունէիր ի վաղուց հետէ ընդ մեզ, որպէս որ մենք ունէաք նոյն սէրն ընդ քեզ որպէս որդի, և յայժմ որպէս եղբայր հոգևոր։ Սիրալրական քարտէզն քո ընկալայ զոր գրեալ էիր թւին ՌՃ ու էճ ժգ, և մարտի ժա, ուրախացայ յոյժ, և միշտ պաղատեմք առ ամենակարօղն զի տացէ յաջողումն հոգևոր գործոյդ, աղօթիւք ամէնօրհնեալ Կուսին, և հոգևոր հօրն մերում Սրբոյն Գրիգորի. զի աճեալ բուսանիցի և լինի ծառ մեծ, և արձակեսցէ ոստս ընդ ամենայն Հայաստան, որպէս որ եղև ի նախնումն Եգիպտոս միջնորդութեամբ Սուրբ հօրն Անտոնի. քանզի վերջինս այս առաւել հարկաւոր թուի քան զառաջինն, որպէս որ ի հարսանիս կանա գալիլիացւոց վերջին գինին ախորժ եղև քան զառաջինն, խնդրեմք զի այնպէս արասցէ և այժմ բարեգութն Ցս մաղթանօք բազմեցելովք ընդ նմա ի հարսանիսն Ամէն։ Արդ՝ յայտ առնեմ զբաղձանս սրտի իմոյ որ ի դառնալն իմ հանդիպիմ տեսութեան միմեանց, քանզի հրաման եղև վեհապետէն և սբ ժողովոյն, ասա ի Հռոմ եղեալ ուղղափառ եպիսկոպոսաց հայոց և ասորոց, զկնի յարութեան զատկին գնալ իւրաքանչիւր ուր և կամեսցի, որպէս առաքեալք ի Սուրբ եկեղեցւոյն. և զաղտաբար շրջիլ և քարոզել զբանն կենաց։ Վասն որոյ յօժարութեամբ կամիմ հանդիպիլ Տէրութեան քում և չահիլ յաղօթից ձերում։ Ողջ լեր ի Տէր։

Թւին ՌՃ 1713 դեկտեմբերի 10 ի մեծն Հռոմ յեկեղեցին հայոց.

Տէր Գրիգոր Թափիչեան եղեսացի
հետևօղ ճշմարտութեան

Գերապատութեան քում խոնարհագունեղք ծառայք տէր Ստեփանոս և տէր Թովմաս աբեղայքն իմ Սրբասնունդ աջդ համբուրեն և խնդրեն ի Տէրութենէ քումմէ զի յանձն արասցես աղօթիւք զնոսա կամացն Այ. նոյնպէս ծերունի մեղանցի ասլան տէր Թադէոսն խնդրէ։

Դ.

Հետևեալ նամակը գրուած է Հ. Պօղոս ծառայ կրօնաւոր քահանայէ. սա Հ. Պօղոս Սիմոնեանն է, Մխիթար Աբբայի առաջին աշակերտներէն, այս ժամանակներս Հ. Գէորգ Այնթապցիի հետ առաքելութեան մէջ էր արևելք[1]։ Սոյն երկու Հայրերն են որ յետոյ ի Պոլիս 450 դահեկանի գնելով կ'ազատեն Մեթոնի մեր երկու հայ վարդապետները զՀ. Ղազար և զՀ. Յակոբ, որ Օսմանցւոց ու վենետկեան Հասարակապետութեան պատերազմի պահուն՝ Մեթոն աւ ոտնակոխ ըլլալով՝ գերի տարուեր էին և հայ վաճառականներ զանոնք գնած էին։

---

1. Վարք Մխ. Աբբայի Հ. Յ. Թորոսեան էջ 255։